## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2022 թվականի թիվ 182-Ա

### ԹԻՎ ՀԳ-00075/22 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի մայիսի 10-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-00075/22 վարույթը կարճելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

***1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 22-ին ««Էվրի Դեյ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 69-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 69-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00075/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

«Էվրի Դեյ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) թիվ 69-Ա որոշումը ստացել է 2022 թվականի մարտի 21-ին և 2022 թվականի ապրիլի 4-ին Հանձնաժողով է ներկայացրել Վարույթի վերաբերյալ գրավոր դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում**):

***2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.***

Վարույթը հարուցվել է Հանձնաժողովի լիազորությունների իրականացման ընթացքում Ընկերության կողմից առանց ջրօգտագործման թույլտվության և աղբյուրի ջրի ձեռքբերման «աղբյուրի ջուր» մակնշումով շշալցված ոչ գազավորված ջրեր արտադրելու և իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներով:

***3. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը, 2022 թվականի ապրիլի 4-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 10-րդ հոդվածները, 42-րդ հոդվածի 1-ին մասը, հայտնել է, որ 2008 թվականից իրացնում է «աղբյուրի ջուր Բյուրեղ 19լ» ապրանքը (այսուհետ նաև՝ **Ապրանք**), որի պիտակին նշված է, որ ջուրը շշալցված է Ջերմուկի տեղանքի թիվ 1 աղբյուրից, գործարանի հասցեն է՝ քաղաք Ջերմուկ, Բարեկամության 1: Ընկերությունը նշել է, որ «Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Ջերմուկ Գրուպ» ընկերություն**) հետ 2008 թվականի նոյեմբերի 13-ին կնքած պայմանագրի հիման վրա «Ջերմուկ Գրուպ» ընկերությունից ձեռք է բերում քաղցրահամ աղբյուրի ջուր: Ընկերությունը նաև հայտնել է, որ «Ջերմուկ Գրուպ» ընկերությունից ձեռք է բերել նաև «Բյուրեղ» ապրանքային նշանն օգտագործելու իրավունք:

Ըստ Ընկերության՝ «Ջերմուկ Գրուպ» ընկերությունից ջուրը ձեռք է բերվել հարկային հաշիվներ դուրսգրելու միջոցով, սակայն Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածում հարկային հաշիվներ դուրս չեն գրվել, քանի որ «Ջերմուկ Գրուպ» ընկերության արտադրամասի վերազինումների հետ կապված առաջացել է մատակարարվող ջրի հաշվառման տեխնիկական անհնարինություն, որով էլ պայմանավորված «Ջերմուկ Գրուպ» ընկերության կարիքները գերազանցող մասից ջուրը Ընկերությանը տրամադրվել է անհատույց:

Ընկերությունը նաև հայտնել է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի սեպտեմբերի 18-ին հաստատվել են Ընկերության «ՋուրՋուր» և շշալցված  բնական աղբյուրի խմելու ջուր» տեխնիկական պայմանները (փոփոխությամբ վերնագիրը վերաշարադրվել է «Շշալցված խմելու ջուր «ՋուրՋուր», «Մաքուր Ջուր» և Շշալցված բնական աղբյուրի ջուր «Բյուրեղ»), որի համաձայն «Բյուրեղ» բնական աղբյուրի ջուրը շշալցվում է Ջերմուկի տարածքի թիվ 1 աղբյուրի լրացուցիչ մաքրման փուլ անցած և պայմանագրերի հիման վրա մատակարարված ջրից և իրացվում է 19,0 դմ$^3$ տարողությամբ պոլիմերային տարաներում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 80-րդ և 89-րդ հոդվածներով՝ Ընկերությունը խնդրել է կարճել թիվ 69-Ա որոշմամբ հարուցված թիվ ՀԳ-00075/22 վարույթը:

***4. <u>Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը</u>.***

1) Հանձնաժողովը  2021 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ԳԳ-3061 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-3061 գրություն**) դիմել է Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ **ՊԵԿ**)՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում «հանքային ջրեր և չքաղցրացրած, չբուրավետացված գազավորված խմիչքներ» (ԱՏԳԱՆ 11.07.11) ապրանքային խմբին դասվող ապրանքների արտադրություն և «ջրեր, բնական կամ

արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի)» (ԱՏԳ ԱԱ 2201) ապրանքային խմբին դասվող ապրանքների ներմուծում իրականացրած տնտեսավարող սուբյեկտների ցանկը (անվանումը, կազմակերպաիրավական ձևը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական հասցեն, գործունեության վայրը և այլն), ինչպես նաև վերջիններիս կողմից նույն ժամանակահատվածում բնական խմելու ջրի և մանկական սննդի համար նախատեսված խմելու ջրի իրացման ծավալների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-3061 գրության, 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/71-6/82963 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 01/71-6/82963 գրություն**) Հանձնաժողովին է տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ԱԴԳՏ 11.07.11 և ԱՏԳ ԱԱ 2201 ապրանքային խմբերին դասվող ապրանքների ներմուծում և արտադրություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս կողմից դուրս գրած հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 2022 թվականի հունվարի 12-ի գրությամբ Հանձնաժողովին է տրամադրել նույն ժամանակահատվածում ԱԴԳՏ 11.07.11 և ԱՏԳ ԱԱ 2201 ապրանքային խմբերին դասվող ապրանքների արտադրություն և ներմուծում իրականացրած տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս կողմից ՀԴՄ կտրոնների միջոցով կատարած գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ վերը նշված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է «աղբյուրի ջուր Բյուրեղ 19լ» ապրանքը:

2) Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ ԳԳ-236 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-236 գրություն**) դիմել է ՊԵԿ՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել տեղեկատվություն՝

1. Ընկերության կողմից 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում «աղբյուրի ջուր» մակնշմամբ ապրանքների արտադրության համար ձեռքբերված աղբյուրի ջրի վերաբերյալ (մատակարարի անվանում, ՀՎՀՀ, մատակարարման ծավալ և այլն),

2. «աղբյուրի ջուր» մակնշմամբ ապրանքների արտադրող չհանդիսանալու դեպքում Ընկերության կողմից 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում այլ տնտեսավարող սուբյեկտներից ձեռքբերված Ապրանքների վերաբերյալ (մատակարարի անվանում, ՀՎՀՀ, մատակարարման ծավալ և այլն):

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-236 գրության, 2022 թվականի փետրվարի 10-ի թիվ 01/71-6/8923 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 01/71-6/8923 գրություն**) Հանձնաժողովին է տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից դուրս գրած հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ վերը նշված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է թվով հատ (19լ տարողությամբ) աղբյուրի ջուր, սակայն ձեռք չի բերել Ապրանք կամ Ապրանքի արտադրության համար անհրաժեշտ աղբյուրի ջուր:

3) Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԳԳ-3284 գրությամբ Շրջակա միջավայրի նախարարությունից (այսուհետ նաև՝ **Նախարարություն**) հայցվել է տեղեկատվություն խմելու «բնական» և «աղբյուրի» (չգազավորված և ոչ հանքային) ջրերի ջրօգտագործման թույլտվություն ստացած տնտեսավարող սուբյեկտներին տրված ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ:

Նախարարության՝ 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 1/10.2.3/46 պատասխան-գրության ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությունը չունի ջրօգտագործման թույլտվություն:

4) Հանձնաժողովի նախագահի՝ 2022 թվականի հունվարի 10-ի գրությամբ Նախարարությունից հայցվել է տեղեկատվություն խմելու «բնական» և «աղբյուրի» (չգազավորված և ոչ հանքային) ջրերի ջրօգտագործման թույլտվություն ստացած տնտեսավարող սուբյեկտներին տրված ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ:

Նախարարության՝ 2022 թվականի հունվարի 19-ի թիվ 1/10.2.3/394 գրության ուսումնասիրությունից պարզվել է, որ «Ջերմուկ Գրուպ» ընկերությունը 2004 թվականի հուլիսի 23-ից ունի ջրօգտագործման թույլտվություն՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, Ջերմուկ ՔԿՏ, «N 1» կոչվող բնական աղբյուրից, թույլտվության ժամկետի ավարտը նշվել է 2021 թվականի դեկտեմբերի 19-ը: Նույն տեղեկատվության համաձայն՝ ջրառի նպատակն է՝ խմելու-կենցաղային և արդյունաբերական /շշալցում/:

5) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի փետրվարի 24-ի թիվ ԳԳ-393 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» բառերով մակնշված ապրանքների անվանացանկը և դրանցից յուրաքանչյուրի պիտակը կամ լուսանկարը, որը կպարունակի պիտակին առկա ողջ տեղեկատվությունը,

2. Ընկերության կողմից «աղբյուրի ջուր Բյուրեղ 19լ» ապրանքի, ինչպես նաև «աղբյուրի ջուր» բառերով մակնշված և շշալցված չգազավորված այլ ջրերի իրացման սկզբնաժամկետների վերաբերյալ՝ նշելով ամսաթվերը:

Ընկերությունը 2022 թվականի մարտի 24-ին ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը և պիտակը:

Պիտակին նշված է. «Բյուրեղ, բնական աղբյուրի խմելու ջուր, չգազավորված, շշալցված է Ջերմուկի տեղանքի թիվ 1 աղբյուրից»: Նշված են պահպանման պայմանները և բացելուց հետո պահպանման ժամկետը, ջրի մշակման եղանակը, ջրի հիմնական կազմը, արտադրողի տվյալները, տեխնիկական պայմանը:

6) Դիրքորոշմանը կից Ընկերությունը ներկայացրել է 2008 թվականի նոյեմբերի 3-ին «Ջերմուկ Գրուպ» ընկերության (Վաճառող) և Ընկերության (Գնորդ) միջև կնքված վաճառքի թիվ 1 պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**), որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Գնորդին վաճառել աղբյուրի քաղցրահամ խմելու ջուր, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով:

Պայմանագրի 7.2 կետի համաձայն՝ պայմանագիրը շարունակում է գործել այնքան ժամանակ, քանի դեռ կողմերից որևէ մեկը չի տեղեկացրել համագործակցության ընդհատման մասին:

7) Դիրքորոշմանը կից Ընկերությունը ներկայացրել է իր (Կողմ 1) և «Ջերմուկ Գրուպ» ընկերության (Կողմ 2) միջև 2018 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ ջրի անհատույց տրամադրման վերաբերյալ թիվ 01 ակտը, որի համաձայն՝ հաշվի առնելով արտադրամասի վերազինումների հետևանքով աղբյուրի առանձին մատակարարվող ջրի առանձին հաշվառման տեխնիկական անհնարինությունը՝ Կողմ 2-ը կողմ 1-ին կտրամադրի ջուր ժամանակավորապես անհատույց: Ակտը գործում է, քանի դեռ առանձին հաշվառումը տեխնիկապես անհնար է (հետևաբար, քանի դեռ ջրի մատակարարման դիմաց դուրս չեն գրվում հարկային հաշիվներ): Անհատույց տրամադրվող ջրի տարեկան քանակ սահմանված է մ$^3$:

8) Դիրքորոշմանը կից Ընկերությունը ներկայացրել է «Ջերմուկ Գրուպ» ընկերությանը 2022 թվականի փետրվարի 3-ին տրված ջրօգտագործման թիվ 0024-22 թույլտվությունը:

***5. <u>Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. Ընկերությունն իրացնում է «աղբյուրի ջուր Բյուրեղ 19լ» ապրանքը:
2. 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունն իրացրել է ջուր:
3. Ընկերությունը «Ջերմուկ Գրուպ» ընկերությունից ձեռք է բերում Ջերմուկի տեղանքի թիվ 1 աղբյուրի ջուր:
4. Ընկերությունը «Ջերմուկ Գրուպ» ընկերությունից իրավունք ունի ստանալ տարեկան աղբյուրի ջուր:
5. «Ջերմուկ Գրուպ» ընկերությունն ունի Ջերմուկի տեղանքի թիվ 1 աղբյուրի ջրի ջրօգտագործման թույլտվություն՝ նաև արդյունաբերական (շշալցման) նպատակով:
6. Ապրանքի պիտակին առկա է հետևյալ տեղեկատվությունը՝ «Բյուրեղ, բնական աղբյուրի խմելու ջուր, չգազավորված, շշալցված է Ջերմուկի տեղանքի թիվ 1 աղբյուրից»: Նշված են պահպանման պայմանները և բացելուց հետո պահպանման ժամկետը, ջրի մշակման եղանակը, ջրի հիմնական կազմը, արտադրողի տվյալները, տեխնիկական պայմանը:

***6. <u>Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>***

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 23-ի թիվ 45 որոշմամբ հաստատված «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի անվտանգության մասին» 044/2017 տեխնիկական կանոնակարգի (այսուհետ նաև՝ **Տեխնիկական կանոնակարգ**) 37-րդ կետի համաձայն՝ փաթեթավորված

խմելու ջրի մակնշվածքում թույլատրվում է օգտագործել բառեր, որոնք բնութագրում են դրա բնական հանքաղբյուրներից ծագումը (օրինակ՝ «աղբյուրի», «հանքաղբյուրից» և այլն) միայն այն պայմանով, որ տվյալ ջուրն ունի համապատասխան ծագում և փաթեթավորվում է կամ առանց մշակման, կամ դրա մշակման համար օգտագործվում են միայն Տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 27-րդ կետերով նախատեսված եղանակներ՝ բնական հանքային ջրի համար, և Տեխնիկական կանոնակարգի 26-րդ և 28-րդ կետերով նախատեսված եղանակներ՝ բնական խմելու ջրի համար:

Տեխնիկական կանոնակարգի 44-րդ կետի համաձայն՝ բնական խմելու ջրի մակնշվածքը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

ա) «գազավորված» կամ «չգազավորված» բառը.

բ) ջրառի վայրի մասին տեղեկություններ (գետի, լճի կամ ջրային այլ օբյեկտի անվանումը).

գ) ընդհանուր հանքայնացումը (գ/լ կամ գ/դմ3).

դ) «հիմնական բաղադրություն» բառերը, այնուհետև նշվում են բնական խմելու ջրի քիմիական կազմի տարրերը և դրանց քանակի սահմանային (նվազագույն և առավելագույն) արժեքները (մգ/լ կամ մգ/դմ3).

ե) պահպանման պայմանները և բացելուց հետո պիտանիության ժամկետը՝ 5 լ և ավելի ծավալով սպառողական փաթեթվածքով բնական խմելու ջրի համար:

Տեխնիկական կանոնակարգի 7-րդ կետի 16-րդ պարբերությամբ բացահայտվում է բնական խմելու ջուր հասկացության իմաստը, այն է՝ մակերևութային ջրերից կամ ստորգետնյա ջրատար հորիզոններից ստացված ջուր, որը չի դասվում բնական հանքային ջրի շարքին, սկզբնական վիճակով համապատասխանում է Տեխնիկական կանոնակարգին և պահպանում է իր հաստատուն կազմը, իսկ 19-րդ պարբերությամբ՝ փաթեթավորված խմելու ջուր հասկացության իմաստը, այն է՝ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող խմելու ջուր, որը շշալցված է վաճառքի համար նախատեսված փաթեթվածքի մեջ կամ վերջնական սպառողին իրացվող արտադրանքի առաջնային փաթեթվածքի համար նախատեսված փաթեթվածքի մեջ:

Տեխնիկական կանոնակարգի նշված կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ շշալցված ջրի պիտակին «բնական» և «աղբյուրի» մակնշումները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ տվյալ ջուրն ունի համապատասխան ծագում և փաթեթավորվում է կամ առանց մշակման, կամ դրա մշակման համար օգտագործվում են միայն Տեխնիկական կանոնակարգով թույլատրված եղանակներ, ընդ որում շշալցման համար նախատեսված խմելու ջրի մշակման համար արգելվում է քլորի պատրաստուկների կիրառումը:

Սույն գործով վարույթը հարուցվել է Ընկերության կողմից առանց ջրօգտագործման թույլտվության և աղբյուրի ջրի ձեռքբերման «աղբյուրի ջուր» մակնշումով շշալցված խմելու ջուր արտադրելու և իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առկայության հիմքով, մասնավորապես, Ընկերության կողմից արտադրվել և իրացվել է «աղբյուրի ջուր Բյուրեղ

19լ» ապրանքը, այն պայմաններում, երբ Ընկերությունը չունի ջրօգտագործման թույլտվություն և Ընկերության անունով դուրսգրված հարկային հաշիվներում առկա չէ տեղեկատվություն աղբյուրի ջրի ձեռքբերման վերաբերյալ:

Վարույթի շրջանակներում պարզվել է, որ Ընկերության և «Ջերմուկ Գրուպ» ընկերության միջև 2008 թվականի նոյեմբերի 3-ին կնքվել է վաճառքի թիվ 1 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Գնորդին վաճառել աղբյուրի քաղցրահամ խմելու ջուր, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով: Բացի այդ Ընկերության (Կողմ 1) և «Ջերմուկ Գրուպ» ընկերության (Կողմ 2) միջև 2018 թվականի նոյեմբերի 1-ին կնքվել է ջրի անհատույց տրամադրման վերաբերյալ թիվ 01 ակտը (այսուհետ նաև՝ **թիվ 01 ակտ**), որի համաձայն՝ հաշվի առնելով արտադրամասի վերազինումների հետևանքով աղբյուրի առանձին մատակարարվող ջրի առանձին հաշվառման տեխնիկական անհնարինությունը՝ Կողմ 2-ը Կողմ 1-ին կտրամադրի ջուր ժամանակավորապես անհատույց: Ակտը գործում է, քանի դեռ առանձին հաշվառումը տեխնիկապես անհնար է (հետևաբար, քանի դեռ ջրի մատակարարման դիմաց դուրս չեն գրվում հարկային հաշիվներ): Թիվ 01 ակտով անհատույց տրամադրվող ջրի տարեկան քանակ սահմանված է մ$^3$:

Միաժամանակ պարզվել է, որ Ընկերությունը «Ջերմուկ Գրուպ» ընկերությունից իրավունք ուներ տարեկան ստանալ մինչև աղբյուրի ջուր և 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է թվով հատ (19լ տարողությամբ՝ ընդհանուր ) աղբյուրի ջուր մակնշումով շշալցված ջուր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ Ընկերության գործողություններում հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ առկա չեն:

Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման, եթե առկա է վարույթի հարուցումը մերժելու որևէ հիմք:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե բացակայում է խախտման դեպքը:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության իրավախախտման դեպքը բացակայում է, ուստի թիվ ՀԳ-00075/22 վարույթը ենթակա է կարճման:

### *7. Եզրափակիչ մաս.*

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով՝ Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության

վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Կարճել թիվ ՀԳ-00075/22 վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Էվրի Դեյ» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. մայիսի 10

Երևան